ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2023թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 4 028 638 700 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1 969 907 595 դրամ, կամ 1-ին կիսամյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 48,9 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 1 723 787 100 դրամի դիմաց կատարվել է 817 813 994 դրամ կամ կատարվել է , 47,4 %-ով :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարեկան առաջադրանքը 1 263 273,7 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 555 463,7 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 44,0 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 34,4 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 51,1 %-ով, տեղական տուրքերը՝ 80,9 %-ով, պետական տուրքերը՝ 66,4 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 78 929,4 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 63 856,7 հազ. դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 18 000,0 հազ. դրամի դիմաց փաստացի կազմել է 11 959,2հազ. դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 1 150 494,4 հազ. դրամ:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 464 511,4 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 263 949,5 հազ. դրամ,կամ կատարվել է 56,8 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 28,5 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 115,1 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել են 1 599,2 հազ. դրամ՝ 3 998,0 հազ. դրամի դիմաց :

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 369 883,7 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 168 805,1 հազ. դրամ կամ կատարվել է 45,6 %, որից աղբահանության վճարների մասով 165 010,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 68 455,3 հազ. դրամ կամ կատարվել է 41,5 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 52,2 %-ով:

Ծախսեր

2023 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին կիսամյակի ծախսերը կատարվել են 35,4 %-ով՝ 4 028 638,7 հազ. դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 1 424 129,2 հազ. դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 38,1 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 63,7 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 42,8 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 53,9 %-ով:

ե/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 27,5 %-ով:

զ/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 46,7 %-ով:

է/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 56,8 %-ով:

Մասիս համայնքի 2023թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 3 457 654, 907 հազ. դրամի դիմաց կատարվել է 2 126 666, 64 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 1 164 384, 072 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 262 282, 568 հազ. դրամ, բյուջեի վարչական մասից հատկացում ֆոնդային մասին՝ 700 000, 0 հազ. դրամ:

2023 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 237 851, 25 հազ. դրամ, որից՝

ա/ Համայնքային ենթակայության շենքերի , շինությունների կառուցման, հիմնանորոգման, համայնքային ճանապարհների, մայթերի կառուցման և հիմնանորոգման, բակերի, այգիների բարեկարգման համար, համայնքում առկա ոռոգման համակարգերի հիմնանորոգման, համայնքային ենթակայության մշակույթի տների կառուցման, հիմնանորոգման, հուշարձանների և մշակութային արժեքների պահպանման և վերանորոգման համար ծախսերը կազմել են 159 918, 85 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, այլ մեքենա սարքավորումների, ոչ նյութական արժեքների համար ծախսերը կազմել են 74 647, 4 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 3 285,0 հազար դրամ,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ